

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 րուբլի: Կէս տարեկանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Քիֆիստով գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիարժէքով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպէկով:
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀՈԳՄԱՐԱԶՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԻԱՄԵՆԱՆ ԶՈՎՆԱՆԱՆ ԴՊՐՈՑԻ պատիւ ունի յայտնել,
որ կիրակի օրը, այս մայիսի 1-ին, կատարվելու են ս. Ստեփաննոսի կուսանաց անա-
պատի եկեղեցում ս. պատարագ և հոգեհանգստեան պատարագ կապ հիմնադիր զարդերի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ԶՈՎՆԱՆԱՆԻ

մահվան 17-րդ տարեդարձի օրը: Հոգեհանգստի սկիզբն է 12 ժամին ցերեկվայ:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն կրթութեան խնդրը.— ՆՆՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ընթերցողի օրագիրը. Թիֆլիսի հայ բանաստեղծի ժողովը. Թատրոն
և յերաժշտութիւն. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղադրական աշխարհից.— ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

II

Կովկասեցի ուսանողները, որոնք ու-
սումնասիրում են զանազան մասնագի-
տութիւններ Ռուսաստանի բարձրագոյն
դպրոցներում, շատ անգամ չեն կարո-
ղանում ստանալ իրանց ցանկացածը և
որոնք ամբողջ կյանքը անցկացնում են
կարևոր է մեր երկրում գործելու համար
ապագայում:

Կովկասեցի չէ կարող ուսումնասիրել
այնտեղ մեր երկրի լեզուները, որոնք մի
խոշոր մասը մնում է մինչև այժմ չը հե-
տադաստանդ և չը մշակված նոյն իսկ
մասնագէտների կողմից: Պատմաբանը չի
լսի այնտեղ ընդարձակ կուրսեր վերա-
բերելով թէ մեր և թէ սահմանակից եր-
կրների ազգերի պատմութեան: Աշխար-
հագրագետը չի ստանալ լուրջ ցուցում-
ներ մեր երկրի տեղագրութեան մասին:
Այդպէս և ուրիշ գիտութիւնների վերա-
բերութեամբ:

Աւելի ևս մեծ չափով զգալի է տե-
ղական բարձրագոյն դպրոցի բացակայու-
թիւնը, երբ հարցը վերաբերում է մի
այնպիսի մասնագիտութեան, ինչպէս օ-
րինակ գիւղատնտեսութիւնն է: Եթէ մի
կովկասեցի ուսանող ցանկանայ Ռուսաս-
տանի բարձրագոյն դպրոցներում ուսում-
նասիրել իր հայրենիքի այնպիսի մշա-
կութիւններ, ինչպէս են օրինակ բա-
ժակարուծութիւնը, շերամապահութիւնը,
ծխախոտագործութիւնը, մրգաբուծու-
թիւնը, նա ոչ մի հնարաւորութիւն չի
ունենայ իր ցանկութիւնը կատար անե-
լու, որովհետև Ռուսաստանի հիւսիսի
համար օտար են գիւղատնտեսութեան
այդ բոլոր ճիւղերը: Եւ հասկանալի է,
որ միայն այն ժամանակ, երբ ինքը
Անդրկովկասը կունենայ իր սեփական
բարձրագոյն գիւղատնտեսական դպրոցը,
կարելի կը լինի դասաւանդել այդ ճիւ-
ղերը: Մենք անկասկած յիշատակեցինք
միայն մի քանիսի անունը, և կարող
էինք նրանց վրա աւելացնել այնպիսի
ուսանողներ, ինչպէս են ուղղման և
չորաբաշխութեան տեխնիկան, գինեգոր-
ծութիւնը և այլն:

Այն, ինչ որ ասվեց գիւղատնտեսու-
թեան վերաբերութեամբ, ոյժ ունի
և հանքաբանութեան վերաբերութեամբ:
Անշուշտ Անդրկովկասում նախքան, պղին-
ձը և կովկասեան ուրիշ հանքերի ուսում-
նասիրութիւնը աւելի կարևոր է մեր
երկրի մասնագէտների համար, քան այն
հանքերը, որոնք թէև ինքն ըստ ինքեան
մեծ տեղ են բռնում գիտութեան մէջ,
բայց աւելի քիչ կարևորութիւն ունեն մեր
երկրի համար:

Մեր ասածներից ոչ ըզ է, որ կովկա-
սեան բարձրագոյն դպրոցներին վերա-
պահված է մի դեր, որը անկարող են
կատարել Ռուսաստանի միւս բարձրագոյն
դպրոցները, չունենալով ցանկալի յար-

մարութիւններ և կաշկանդված լինելով
ծրագիրներով, որոնք կապ ունեն այն
տեղերի հետ, ուր նրանք գոյութիւն
ունեն:

Մ Ա Մ Ո Ւ Լ

Բազուի կոտորածի զոհերին օգնելու համար
նուիրատուութիւնները դեռ շարունակվում են:
Լրագիրների մէջ կարդացնք մի քանի խոշոր
գումարներ, օրինակ, իմացանք որ նախար-
դեւանքերոյնքը տուել են 100 հազար, քա-
ղաքային վարչութիւնը 50 հազար, լրագիր-
ներն էլ գումարներ հաւաքեցին: Բայց բաւա-
կան է այդքանը: Վնասվածներին օգնող քա-
ղաքային յանձնաժողովի անդամներից մէկը
գրում է «НОВОСТИ» լրագրի մէջ:

«Առ այժմ ցուցակագրված են 1 միլիոն 600
հազար րուբլու ֆնանսեր: Բայց պէտք է
նկատի առնել, որ ուղղակի կամ կողմնակի
կերպով տասնեակ և հարիւր հազար րուբլի
ֆնանս կըրողները (իսկ այդպիսիները քիչ չեն)
կամ հաշիւ չեն առնում և առնում են այն
չափով, թէ որքան այդ ֆնանսները զբո-
ղել են ապրուստի բոլոր միջոցներից (իսկ
այդպիսիները քիչ են): Եթէ այսպէս չը լի-
նէր, ֆնանսերի թիւը տասնեակ միլիոննե-
րի կը հասնէր:

Բացի դրանից, պէտք է նկատի առնել
և այն, որ շատ ֆնանսներ փախել են
Բազուի սարսափաւոր դրութեան մէջ,
հաշտութիւն կայանալու օրից և դեռ յանձ-
նաժողովին խնդրեցին չեն տուել: Պէտք է
աւելացնել և այն, որ սպանվածների, այր-
վածների անդամաւոր զարձաններ և կո-
ղտաւորվածներ մէջ շատ են այնպիսիները,
որոնք միակ կերակրողներ են Անդրկովկա-
սի գիւղերում գտնված իրանց ընտանիք-
ներին, իսկ սրանցից նոյնպէս դեռ խնդրե-
ցին չեն ուղարկվել յանձնաժողովին:

Այսպիսով, եթէ նկատի առնենք այս
բոլորը, վերեւ յիշած թւանշանը 1,600,000
րուբլի անպատճառ պէտք է հասցնել
2,000,000-ի, որ ոչ մի դէպքում չէ կարելի
չափազանցած համարել:

Իսկ միջոցներ ունի յանձնաժողովը: Մին-
չև այժմ նա ստացել է 220,000 րուբլի: Են-
թացիկ վճարվում է ժողովարարութիւն սկսել Բա-
զուի նախարարութեան օգնութեամբ մէջ և այդ էլ
հազիւ 50 հազարից աւել տայ: Մի 30 հազար
էլ գուցէ Կովկասի ուրիշ քաղաքներից ստաց-
վի: Եւ ահա 2 միլիոն պահանջի դիմաց միայն
300 հազար րուբլի:

Եւ այսպէս—շարունակում է յօդուածա-
գիրը—Բազուի ֆնանսած ազգաբնակչութեան
առջև դրված է հարց—կամ յանձնաժողովի
անհաւատ քաղաքացիների միջոցներ չը լինե-
լու պատճառով, զուրս չզբաղված լինել քա-
ղաքային փողոցները և դրսի ճանապարհը
ինչպէս բազմահազար մի ամբողջ, բազմա-
ցած գլխաւորապէս կանանցից և երեխանե-
րից, զբոլված ապրուստի բոլոր միջոցներից,
կամ քի ստանալով յանձնաժողովից բաւա-
կանաչափ և նպատակայարմար օգնութիւն,
վերադառնալ իրանց նախկին բարօրու-
թիւնը վերականգնելու:

Հաղաբաւոր ֆնանսներին սպառնացող
այդ սոսկալի ապագան բաւական է, որ ամեն
մէկի կրօնքը դուրս թուէ աղաղակ—«օգնե-
ցէք»: Եւ այդպէս էլ անում է յօդուածագիրը:
Նա դիմում է ամբողջ ուսում հասարակութեան
և խնդրում է օգնութիւն, շուտափոյթ, լիա-
ձեռն օգնութիւն:

Տեսնենք ինչ արձագանք կը տայ այդ օգ-
նութեան աղաղակը:

Ի դէպ: Նոյն «НОВОСТИ» լրագրի մէջ պ.
Ստարցիկով աղագրեց մի շարք յօդուածներ
«Արեւնոտ օրերը Բազում» վերնագրով, ո-
րոնց մէջ շատ գեղեցիկ կերպով լուսաբան-

ված են սոսկալի աղէտի պատճառները:
Մարդու մաշկը բիւր-բիւր են կանգնում,
երբ նա գտնէ մի րօպէ կենսաբանական է
այն մտածվածքի վրա թէ ինչ հրէշաւոր
գործեր են սարքվում, ինչ ստոր, զաղանա-
լին միջոցներ են գործադրվում մարդկու-
թիւնը դժբախտացնելու համար: Ուրախալի
է, որ ուսանց մամուլի լաւագոյն մասը կա-
տարեց իր ընդունելութիւնը, արձակեց իր վճի-
ռը: Անկասկած, սենատոր Կուզմիտիկով
ընտրութիւնն էլ մի և նոյն եղբայրացութեան
կը հասնէ: Փաստերը չափազանց բազմաթիւ
են և պերճաբոս:

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XV

Գիտե՛ք որ Կովկասեան վարչութիւնը շա-
րունակ աշխատում էր հեռացնել թիւրքահայ
գաղթականներին Կովկասի սահմաններից:
Միակ զինուորականը, որ անվում էր նը-
րանց, ուսանց հպատակութիւն ընդունեցին
այն պայմանով որ նրանք, կատարելով մի
հպատակի բոլոր պարտաւորութիւնները, քան
տարվայ ընթացքում չը պիտի ստանային
հողեր:

Յայտնի է նոյնպէս որ գաղթականների մե-
ծամասնութիւնը չը կամեցաւ այդ պայմանե-
րով ուսանալու և դառնալ և մեծ յօժարու-
թեամբ պատրաստվեց վերագտնալ իր հայ-
րենիքը: Բայց այդտեղ մի անյաղթելի ար-
գելը: Թիւրքաց կառավարութիւնը բացարձակ
կերպով հրաժարվեց ընդունել իր հպատակնե-
րին և ուսանց գիւղատնտեսական չը կարողացաւ
այդ դժուարութիւնը վերացնել:

Եւ այդպիսով դժբախտ փախստականների
համար ստեղծվեց մի անորոշ դրութիւն, նը-
րանք, այսպէս ասած, օգի մէջ կանգնած մը-
նացին:

Սե ծովի արևելեան ափերը ծաղկեցրած
թիւրքահայերը շատ բանով տարբերվում էին
1895—1896-ի կոտորածներից փախած հայե-
րից: Նրանց մեծամասնութիւնը գաղթել էր
այդ ափերը կոտորածներից առաջ, ունէր
հաստատ գործ, այսինքն մի չնչին վարձա-
տրութեամբ արդիւնաբերող հողեր էր ստեղ-
ծում ուրիշի համար, ստեղծում էր մի մեծ
անետոր, ստեղծում էր և նշանաւոր եկամու-
տի աղբիւր պետական գանձարանի համար:

Ըստ երևոյթին, գտնէ այդ գեղեցիկ գոր-
ծունէութիւնը, որ միայն հիացնել կարող է
երկրի տնտեսական բարգաւաճման բաղկա-
մանը, պիտի պահպանէր Սե ծովի ափերում
բոլորն թափող մշակների այս գործիւնից,
որի մէջ դրված էին Անդրկովկասի միւս տե-
ղերում ապրող թիւրքահայ փախստականները:

Բայց այդպէս թւում է: Երբ երկրի բոլոր
շահերը, նոյն իսկ տնտեսական շահերը, գտն
են բերվում քաղաքականութեան, այդտեղ այլ
ևս խօսք չէ կարող լինել ոչ մի կուլտուրայի,
ոչ մի բարեկեցութեան մասին:

Եւ ծխախոտագործ բազմութեան համար էլ
կարգադրութիւն եղաւ: անմիջապէս հեռանալ
երկրից: Բայց որովհետև փորձով յայտնի էր,
որ գաղթականները, որքան էլ կամենան, չեն
կարող հեռանալ, քանի որ թիւրքերն փակել
է իր սահմանները նրանց առաջ, ուստի
ծխախոտագործները համար անօրինակ, որ
եթէ չը հեռանան, պիտի տեղափոխվեն հիւ-
սիսային նահանգները: Սե ծովի փարթաւ ա-
փերից հիւսիսային բնակչի մօտ, շուրջ տը-
սիկական ընտրութիւնից հիւսիսային անոյս
ճահիճները: Օգուտ այնտեղ, խորթ պայմա-
ններ, կլիմայական դժուար հանգամանքների
մէջ, թիւրքահայ գաղթականները, ի հաւիչ,
չէին կարող տալ:

Երբ Սե ծովի ափերում լուր տարածվեց, որ
հայերը ստեղծված են երեսի վրա թողնել
ծխախոտի անկարանները և հեռանալ այն
երկրից, ուր այնքան քրտինք թափել, այն-
պիսի հակադրական գործ էին կատարել ամենքը
հասկացան, որ դա նշանակում է տնտեսական
կատարելաւ քայքայում. սպանվում էր տարի-

ները ընթացքում ստեղծված ահագին գործը:
Եւ այդ ճայնը բարձրացրին ամենքը, որոնք
թիւրքահայ ծխախոտագործի բերքից առատ
շահ ունեն. գործարանատէրերը, կարուծա-
տէրերը, վաճառականները: Անտարբեր չը
մնացին նոյն իսկ ուսում գիւղացիները: 1904-ի
հոկտեմբերի նրանք գաւառապետին խնդրե-
տուին, խնդրելով, որ իրանց էլ գաղթեցնեն
հայերի հետ, քանի որ իրանք առանց հայերի
ապրել չեն կարող:

Անհասկանալի էր մնում թէ ինչպէս այդ-
քան հեշտ կերպով արհամարհվում են երկրի
տնտեսական առաջնակարգ, վերին աստիճանի
կարևոր շահերը:

—Մեզ ասում են թէ ծխախոտագործները
մեզ համար անցանկալի տարր են,—ասաց
կալուածատէր իշխան Շերվաշիճէն Գիւղա-
տնտեսական ընկերութեան նիստում: Աշխա-
տաւոր մարդիկ են յանկարծ անցանկալի: Ին-
չու այսպէս: Ինչ թւում է, որ ուղղակի ան-
աստուածութիւն է դուրս բերլ ծխախոտա-
գործներին այն տեղերից, որոնք առատ ու-
նոված են նրանց աշխատաւոր բերքիցով և
որոնք իրանց այնքան ծաղկած դրութիւնից
անխուսափելի կերպով պիտի վերածվեն նախ-
կին անապատային տխուր դրութեան:

Այսպիսի ձայներին վերջ է վերջոյ միացաւ
Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը,
իրեն մի հիմնադրութիւն, որի պաշտօնն է
հովանաւորել գիւղատնտեսութիւնը մեր երկ-
րում, նրա զարգացման պայմանները ընդիւ և
մշակել և ջանք գործ դնել, որ տնտեսական
արդիւնաբերութիւնը առաջ գնայ: Ներկայ
տարվայ մարտի 2-ին ընկերութեան, ընդհա-
նուր ժողովում պ. Ալեքսանդր Բալասթար
կարդաց մի գեղեցիկ, որի մէջ փաստերով
և թւանշաններով պատկերացրեց, թէ ինչ
դրութեան մէջ է գտնվում ծխախոտագործու-
թիւնը Սե ծովի ափերին և ինչ վիճակ է նը-
րան սպառնում, եթէ հեռացվեն թիւրքահայա-
տակ ծխախոտագործները, (հայ, յոյս և թիւրք):
Պարզելով այդ բոլորը, պ. Բալասթար առա-
ջարկում էր, որ Գիւղատնտեսական ընկերու-
թիւնը խնդրէ Կովկասեան բարձր իշխանու-
թիւնից և երկրագործութեան ու ֆինանսների
մինիստրներից, որ ծխախոտագործներին թող
տրվի մնալ Սե ծովի ափերում:

Ժողովը երկար վիճաբանութիւններից յե-
տոյ, որոնց մէջ կային թեր և դէմ կարծիք-
ներ, միաձայն ընդունեց պ. Բալասթարի ա-
ռաջարկութիւնը և ընտրեց երեք հոգի, որոնք
այդ վճիռը պիտի ներկայացնէին կառավար-
չապետի պաշտօնակատար գեներալ Մալաւա-
յին: Չը մոռանանք, որ այդպիսի միաձայն
վճիռ կայացնող ժողովը բաղկացած էր, բացի
հայ, յոյս և ուս և վրացի անդամներից:

Բարեբաղդաբար, կառավարչապետի պաշ-
տօնակատարը մի բարեպաշտ, լուսաւոր
հասկացողութիւնների տէր գործիչ է: Նա
համակրանքով ընդունեց ընկերութեան խըն-
դերը և իր կողմից միջնորդեց բարձր կա-
ռավարութեան առաջ:

Ինչպէս յայտնի է, ծխախոտագործներին
թողնալով մէջ է մի տարի էլ մնալ իրանց տե-
ղերում, իսկ նրանց հարցի կարգադրութիւնը
թողնված է Կովկասի նոր Փոխարքային:

Եւ ահա, մինչդեռ հազիւ հազ, ինչպէս աս-
վում է, ողորմութեան մի դուռ է բացվում
անտուն—անտէր, բայց այնքան օգուտաւոր
մի ժողովրդի համար, որ մատնված էր աշ-
խարհի չորս կողմերում թափառական ցար ու
ցրիւ գալու և դառնութեան բաժակը խմելու
անչափ ու անսահման,—այսպիսի մի ժամա-
նակ, ասում ենք, անցեալ ընթիւն եռանդուն
փաստաբաններ հանդիսանում են... վրացի
նացիօնալիստները:

Նրանք մի ամբողջ աղմուկ են բարձրացրել:
Նրանք դարձեալ կանչում են «Հայրենիքը
վտանգի մէջ»...

